



### 39. ՎՐԵԺՆ ՈՒ ԴԱՏԱՍՏԱՆԸ

Կհընի, չի հընի, էրկու հընգեր կըհընեն, մեկի անունը՝ Ալո, մեկէլինը՝ Բալո: էրկուան էլ աղքատ, Ասսու քյասիբը, օրեխացի կարոտ, էրեխեքը տունը լինքը, ճվերը՝ բաց: էտի քիչ ա, Ալոյի կնիկն էլ փորով ա, էսօր-էքուց ա: Ալոն՝ բարի, Բալոն՝ չար: Բարի Ալոն էս վատ, անպետք մարթի խետ էլ յոլա էր էթում: Դես-դեն Ալոն ման էր գալում, աշխատանք էր քթնում, մինակ չէր անում, մտածում էր՝ Բալոն էլ մեխկ ա, կանչեմ, մե քանի կոպեկ էլ թո էնի ստանա, էրեխի տեր ա, էսքան տարվա հընգեր ա: Եփ աշխատանքն էլ վերչացնում ին, Բալոյին մե քանի մանեթ հաժել էր տալում, Բալոն էլ չէր ամանչում, վերցում էր:

Եփ Ալոյի կնիկը մարթի վրեն նեղանում էր, թե՛ դու էլ էրեխի տեր ես, հավասար աշխատում եք, հըլա ես հիմանում եմ, որ դու հաժելի ես աշխատում, էլ հընչի փողի շատը Բալոյին ես տալում, Ալոն հանգիստ ասում էր կնգան.

—Բան չըկա, կնի՛կ, Բալոն ագահ, աչքը ծակ մարթ ա, թո ընդրա բաժինը իմուց մե քանի մանեթ էլ շատ հըլնի:

Կնիկը տենում էր, որ մարթին չի կանա համոզա, ձենը կղրում էր:

Ալուն էր: Գեղի աշխատանքը վերչացավ, Փայլա բռնող չըկար, քաղից ու կալուկուտից պրծել են, որոչեցին էթան քաղաք: Քաղաքում աշխատանք ճարվում էր, Փայլի շատ գործ կար, տանում ին բաղ թաղելու, տները վերանորոգելու: Մե քանի մանեթ կաշխատեն, կըտան աղ, սոխ, ոտնաման, չիթ կառնեն, կըբերեն տուն, որ ձմեռը շատ նեղութուն չըբաչեն, էրեխեքը ցրտից չըզկուտան: էրեխա են, էթում են պզի վրա խաղալու, հոլ քցելու, սլլալու, ձնթոփ խաղալու:

Հէլան գացին քաղաք: Գիշերը մնացին մե դվոր: Դվորնիկը փողն առավ, ետո ներս թողեց: Ալոն էրկու լոչ էր տարել, Բալոն՝ մե: Ալոյի էրկու լոչը հիրկունը կերան: Հառավոտ շուտ հելան գացին Փայլի բաղար: Կայնան, կայնան, հելավ ժամի տասը:

Ալոն ասավ.—Բալո՛, սիրտս թուլնում ա, բեր էտ խացը կիսա՛, ուտենք:

—Մե խաց ունեմ, էն էլ աչկտ վրե՞ն ա, տո ազա, բա ես սաղ օրը ի՞նչ բղի ուտեմ,—ասավ Բալոն:

—Լա՛վ, մի՛ նեղացի, Բալո՛ ջան, ես յոլա կէթամ:

Բալոյի խախսաթը Ալոն լավ էր հիմանում:

Բալոյի էտ արարքից ետո Ալոն ասավ.—Բալո՛, արի համա-  
ձայնվենք, ինչքան աշխատենք, փողը ախպոր պես հավասար կի-  
սենք, թե չէ մեկս շատ ունենա, մեկս՝ քիչ, լավ չի: Ախպերութունը  
լավ բան ա:

Բալոն համաձայնվեց: Խոսք տվին, որ ամսի վերջին ուրբաթ օրը  
հիրկուն էլի ըստե հանդիպեն, որ որոշեն մնա՞ն, թե՞ էթան տուն:  
էտ խոսալու ժամանակ էրկու մարթ էկան, ըստնց ջոկ-ջոկ տարան:  
Մե ամիսը որ թմմավ, էկան հիրար գթան:

Ալոն հընգերին փորցելու խըմար ասավ.—Ես 60 մանեթ եմ աշ-  
խատե, դո՞ւ քանի մանեթ ես աշխատե:

Բալոն ասավ, որ հինքը 70 մանեթ ա աշխատել, 5 մանեթը հըն-  
չի իզուր տա Ալոյին: Ալոն ասավ՝ լա՛վ, չես տալում՝ մի՛ տուր, ես  
100 մանեթ եմ աշխատել, արի մացած 30 կիսենք, Բալոն շուտ վեր-  
ցուց Ալոյի 15 ուրբլին, դրեց ջեբը, մտկում ծծղաց Ալոյի «ախմա-  
խության» վրեն:

Փողը կիսելուց հետո Ալոն խառցուց.—Բալո՛, անոթի չե՞ս, էթանք տժվժիկ ուտենք: Գացին տժվժիկ վերցին, լավ կերան: Ալոն  
ղաստու ձգձգում ա, տենա Բալոն ջեբից փող կըխանա՞: Բալոն չէր  
մտածում փող տալու մասին: Ալոն փողը տվեց, գացին դվորը քնե-  
լու: էլի խոսացին, պայմանավորվեցին տանը հինգ օր էլ աշխատեն,  
ետո հանդիպեն: Աշխատանքը չէր վերջացել, բաղերի թաղերը շա-  
րունակվում էր, գնան տունը պարապ-սարապ նստե՞ն, մե քանի  
մանեթ էլ կաշխատեն, մե բան հավելի կառնեն:

Ալոն բաղ էր թաղում, կեսօրին ծառի տակը նստուկ խաց էր  
ուտում: Ծառի վրեն էլ մե ճնջուղ նստու հիշկում էր:

Ալոն վերցեց խացի մե պատի կտոր քցեց, ասավ.—Ճնջո՛ւղ, դու  
էլ Աստու ստեղծած ես, Աստված ձեզի թե ա տվե թոնելու, հըմա  
աշխատանք չի տվել, առ մե կտոր խաց իմ աշխատածից կե՛ր, մեղք  
ես, էլ որթ չըկա, հատիկ չըկա, որ ուտես:

Ճնջուղը տեսավ, որ Ալոն բարի մարթ ա, մարդկային լիզվով  
ծառի վրավից Ալոյին ասավ.—Բարի՛ մարթ, էտ ծառի տակը ոսկի  
կա, քանդա՛, վերցո՛ւ:

Ալոն քանդեց: Բացվավ մե սալ: Սալը շուռ տվեց, մե կարաս  
լինքը ոսկի: Մտացեց. «Ինչ անեմ, մինակ խանեմ, Բալոն կասա՛

չատը քեզի ես վերցրել: Մնացեր ա իրեք օր: Իրեք օր ետո կէթամ Բալոյին էլ կրբերեմ, կրխանենք, կրկիսենք, կէթանք տուն»:

Ալոն Հանդիպավ Բալոյին, քաշեց մե յան, որ մարթ ու լսող չըկար, ասավ, որ ոսկի ա քթե, էթան խանեն: Ետ դարցան, գացին էն բաղը, որտեղ Ալոն էր աշխատել: Տեսան բաղի տերը Հըլա բաղումն ա, ստուգում ա, տենա խավողի մովերը Հո բաց չեն մացե, Ալոն լա՞վ ա թաղե: Բաղի տերը շատ չնորակալ էր Ալոյի աշխատանքից: Ալոն խաղեինին ասավ, որ դվորը շատ են լցվել, տեղ չըկար, էկան, որ քնեն բաղի Հնձանում, Հառավոտ կէթան: Բաղի տերն ասավ, որ խոտի դեզից մե քիչ խոտ վերցնեն, բերեն քցեն տակները, քնեն, Հնձանում ցուրտ ա: Տղերքը չնորակալ Հելան խաղեինից: Էս ասելուց Հետո խաղեինը գնաց տուն, տղերքը մտան Հնձանը: Մարթըմուրթը, որ դաթարավ, Հելան կարասը բացին, խանեցին ոսկիքը կիսին: Կիսեցին, լցին Հիրանց տորբակները, ուզեցին էթալ:

Բալոն ասավ.—Մե քիչ էլ մնանք, թո լավ մթնի, ետո էթանք: Բալոն մտածում էր չար բան, Ալոյին սպանա:

Ալոն մեամիտ նստուկ էր, Բալոն վերցուց մե մեծ քար ու տվեց Ալոյի գլխին: Ալոն Հընգավ մեսկի վրեն:

Բալոն քարը վերցուց, որ մեկ էլ զարկա, Ալոն ասավ.—Բալո՛, միտք ես դրե ընձի սպանել, Հըմա մե խնթիր ունեմ: Կնիկս ծոցվոր ա, տղա կրբերա, անունը կրդնեք Վրեժ, որ թուրքից իմ խոր վրեժը լուծա, խորս թուրքերն են սպանե, ջուխտ տղա Հըլնի, մեկէլի անունը դրեք Դատաստան, ախճիկ Հըլնի՝ ինչ անուն ուզում եք, դրեք:

—Կրկատարեմ,—ասավ Բալոն ու նորից զարկեց:

Ալոյին սպանեց, թաղեց ծառի տակը, ոսկին վերցուց ու գնաց տուն: Ալոյի կնիկը էրկու տղա էր բերե: Որ լսաց, թե Բալոն էկեր ա, վազավ Բալոյի մոտ:

—Բալո՛ ախպեր, բա Հընգե՞րտ Հուր ա, չէ որ մե տեղ գացիք:

—Սանա՛մ քույրիկ, գացինք քաղաք, Հիրարից բաժանվանք, էլ չըտեսա, ես էլ մտածում ի, թե աշխատանք չի քթե, էկեր ա տուն: Ուրեմն չի՞ էկե: Դա լավ ա, լավ տեղ ա քթե, աշխատում ա, դե ընդրա բախտը բերում ա, իմ գործը վերչացավ, եղանկը ցրտեց, թողի էկա: Աչունն Հընցավ, ձմեռն էկավ, Ալոն չըկա ու չըկա: Կնիկը ճամբա յա պախում, որ Ալոն գա, էրեխեքին կնքեն, էրեխեքը մե ամսական, կնքուկ չեն:

Էտեց էլ աչկը ճամփին մնաց: Բալոն ետքը կորցնելու խըմար, մտածեց քավոր դառնալ:

—Սանա՛մ, Ալոն չըկա, ես էրեխեքին քավոր կըդառնամ, մե քա-

նի մանեթ փող եմ բերել, կնունք անենք: Էրեխեքի անուններն էլ ես կրդենմ:

Տերդեր կանչին, կնքեցին: Իրեք մանեթ տերդերին տվեց, 10 մանեթ էլ տվեց սանամորը, որ Էրեխեքին բան առնի, սանամորն էլ մե դեյրա առավ: Սանամերը չնորակալ էր: Աղքատի Էրեխեն չլուտ, բարիկ, անոթի էլ ա մեծանում: Էրեխեքի անունները դրեր ին Վրեժ ու Դատաստան:

Անունը դնելու ժամանակ քավորն ասել էր՝ Վրեժ ու Դատաստան դնենք, որ թուրքերից Հիրանց պապկի վրեժը լուծեն, պապկին թուրքերն են սպանե:

Վրեժն ու Դատաստանը մեծացան, դարցան 10-12 տարեկան, մե օր դռանը Էրեխեքի խետ խաղում ին:

Մոր ուրախութունը էս ջնիկներն ին: «Ո՛րք չըտեսան, լավ պախեմ»,—մտածում էր մերը: Հուրիչների խացն էր թխում, լվացքն էր անում, կու էր հաֆկում, փթիր էր թխում, էտ ձևով Էրեխեքին պախում էր: Էն վախտը, որ Էրեխեքը ճամբի մոտ խաղում ին, էս երգրի թաքավորն ու վազիրը էստեղով հընցնում ին: Ո՛րն ժամանակ սովորութուն կար, թաքավորն ու վազիրը չորերը փոխում ին, էթում քաղաքներն ու գեղրանքը ման գալում, տենան՝ ինչ են խոսում Հիրանց մասին, ո՞նց են աբրում, գո՞հ են, թե՞ դժգոհ: Հիրանց հետեից էլ հեռու-հեռու բերում ին թիկնապահներին, որ եթե հանգարց թաքավորին ճանչըցող, վրեն հարցակվող ըլնի, պաշպանեն:

Թաքավորն ու վազիրը, որ Էրեխեքին տեսան, նստան քարերի վրեն, թաքավորն ասավ.—Վազի՛ր, չատ ման էկանք, նեղացուկ ենք, նստենք, դինջնանք, համ էլ տենանք, թե Էրեխեքն ի՞նչ խաղ են խաղում:

Էրեխեքից մեկը, որ դատավորն էր, ասավ.—Վրե՛ժ, դու կպարոտով կպար ճանին, ճանը չուռ էկավ, էտ մեկը չենք հաշվի, նորից քցեք:

—Ձէ՛, Դատաստա՛ն ջան, ես չըկպա, ճանն հինքն հըրան չոճվավ:

—Լավ, ինչ որ ա,—ասավ Դատաստանը,—նորից քցեք:

Թաքավորն ուշադիր հիշկում ու լսում էր:

—Վազի՛ր,—ասավ թաքավորը,—դու էս Էրեխեքի խաղից մե բան ջոկի՞ր, ինչ են խոսում:

—Թաքավորն աբրած կենա, ինչ ջոկեմ, Էրեխա են, խաղում են, մեկը ծուռն ա քցում, մեկը դալբութուն ա անում, ով գիդա, թե ինչ են անում, ինչ են խոսում:

—Վազի՛ր, լա՛վ ուշադիր լսա և հիշկա՛, էստեղ մե բան կա,—ասավ թաքավորը:

—Բանն էն ա, որ խաղում են, ոչ մե գաղտնիք չըկա:

—Կա՛, վազի՛ր, կա՛, ուշադրութիւն դարցրու։  
 Էնենց էլ վազրի խելքը բան չըկղրեց, չընայած շատ հիշկաց,  
 լսաց էրեխեքի ասածները, վեճերը։  
 —Էս էրեխեքից էրկուսի անունն ի՞նչ ա, վազի՛ր։  
 —Բա ես ի՞նչ հիմանամ, հո հիմաստուն Սողոմոնը չեմ։  
 —Ես էլ հիմաստուն Սողոմոնը չեմ, հըմա հիմանում եմ։ Էրեխե-  
 քից մեկի անունը Վրեժ ա, մեկէլինը՝ Դատաստան։  
 —Է, ինչ անենք, թաքավոր՛, Վրեժ շատ կա։  
 —Շատը շատ կա, հըմա Վրեժ ու Դատաստան միասին քիչ կա։  
 Տե՛ս, վազի՛ր, ինչքան էլ նման են, ոնց որ ախպերներ հըլենն։  
 —Նման են, թաքավոր՛, դուզ ա։  
 —Ըստե մե գաղտնիք կա, որ մենք չիմանանք, ո՞վ բղի հիմանա,  
 ով դատաստան անա, վազի՛ր։ Մեր թաքավորութեան մեջ անպատ-  
 ճառ մե անօրենք բան ա կատարվել, պետք է դրա հետք քթնենք։  
 Արի կանչենք էս էրեխեքին, խոսցունք, մե բան կիմանանք, էրեխեն  
 մեամիտ, անմեղ ա, ճիշտը կասա։  
 Վազիրը էրեխեքին ձեռով նշան արավ, որ մոտ գան։ Էրեխեքը  
 խմբով, վազներով էկան կայանան ըտուց հառեչը։  
 —Ինչ կա, քեռի՛, ո՞ւմ տունն եք, խարցնում, մենք կասենք։  
 Ծարա՞ւ էք, ջո՞ւր բերենք, —հարցրին տղաները։  
 —Չէ՛, ծարավ չենք, ոնչ մեկի տունն էլ չենք ուզում, —ասավ  
 թաքավորը, —մենք ուզում ենք հիմանանք ձեր անունները։  
 Տղաներն հիրանց անուններ ասին։  
 Էն ժամանակ թաքավորը Վրեժին ու Դատաստանին  
 ասավ. —Վրեժ ու Դատաստա՛ն, ախպերներ՞ եք։  
 Երեխաները դրական պատասխան տվին։  
 —Ո՞ր-մեր ունե՞ք, —խառցրեց թաքավորը։  
 —Մեր ունենք, խեր չունենք, —ասավ Վրեժը։  
 —Ձեր խերը մեռե՞ր ա, դուք հիրանը տեսե՞ր եք։  
 —Չէ՛, քեռի՛, մեր խորը չենք տեսե, գնացեր ա մշակութեան էլ  
 ետ չի էկե, չենք հիմանում, թե ինչ ա պատահե։  
 —Ձեր տունը ըստեղից գա՞տն ա։  
 —Մեր տունը էսիկ ա։  
 Թաքավորն ու վազիրը հիրար հետ հերեա հիշկացին։ Ի՞նչ տուն,  
 մե ավերակ։ Ջարմացան, որ էտ տեսակ տան մեջ մարթ ա արրում  
 ու չի խիլընդնում։  
 —Մերտ տա՞նն ա, Վրեժ։  
 —Տունն ա, —ասին ախպերները, —հէսօր կիրակի ա, լվացքի  
 չի գացե։  
 —Վի՞ր լվացքն ա անում։

—Վիրը պատահի: Լվացք ա անում, խաց ա թխում, արբում ենք:

—Բա դուք չե՞ք աշխատում, մայրիկին ոնչ մե բանով չե՞ք օգնում:

—Մենք էլ էթում ենք մեշեն, չոր փետ ենք հաֆկում, բերում, տեսե՛ք՝ իջքան ենք բերե, էլի կըբերենք, հէսօր դինջնում ենք: Աչունն էլ որ գալում ա, էթում ենք մեշի տանձ ենք բերում, թթու ենք դնում, էնենց ենք ուտում:

—Աբրե՛ք, տղե՛րք, լա՛վ եք անում: Բայց ինչո՞ւ ձեր անունները դրել են Վրեժ ու Դատաստան:

Տղաները չիմացան ինչ պատասխանեն, եսիմ ասեցին:

—Վրե՛ժ, տղա՛ս, գնա մայրիկիտ կանչի՛, թո գա, բան ենք խարցնում:

Գնաց մորը կանչելու: Դարցան Դատաստանին:

—Դատաստա՛ն, մենք տեսանք, որ դու էիր դատաստան անում, ճիշտ ես դատում, ախպորտ կողմը չե՞ս պախում:

—Ձէ՛, քեռի՛, կողմապահութուն չեմ անում: Էտի լավ բան չի:

Եկավ մերը, ձեռը դրեց փորին, կայնավ թաքավորի հառեչը, սպասում էր, թե էս անծանոթ մարթիք ի՞նչ են ուզում:

—Ուսնըմ քույրիկ, էս տղերքը քո տղե՞րքն են:

—Իմ տղերքն են, ախպե՛ր ջան:

—Քանի՞ տարեկան են:

—Տասներկու տարեկան, ջւիկ են:

—Էրեխեքից հիմացանք, որ հիրանց խերը գնացել ա աշխատանքի, ետ չի էկե: Ձե՞ս ասի, ի՞նչ ա պատահե:

—Ես էլ չեմ հիմանում, թե ինչ ա պատահե, գնաց ու էլ չէկավ, աչկներս մնաց ճամբեն: Մարթս ձեռնամեղուկ կորավ:

—Մենա՞կ գնաց, թե՞ խետը մարթ էլ կար:

—Մեր քավոր Բալոյի խետ գացին: Բալոն էկավ, հինքը չէկավ:

—Քավոր Բալոն գեղո՞ւմն ա արբում:

—Բա ի՞նչ ա, հէն ա քավորի տունը:

—Կարելի՞ ա կանչենք, էրեխե՛ք, ո՞վ չուտ կըգնա քավոր Բալոյին կանչի:

—Ես,—ասավ Վրեժն ու վազավ:

Թաքավորը երեխաներից մեկին ասավ. —Տղա՛ ջան, ա՛յ էն մարթիք, որ կայնուկ են էն տան մոտ, էրեվում ա՛ օտար մարթիկ են, գնա կանչի՛, գան, տեսանք՝ ի՞նչ մարթ են, ինչ են անում էստեղ:

Ըտոնք թաքավորի թիկնապահներն ին:

Գեղացիք տեսան, որ մե քանի մարթ ա հավաքվե, մեկ-մեկ էկան, էկան, շատացան, հետո տեսնողները էլի մոտցան ու սաղ գեղի տղամարթը թուփ հելավ:

Էտ ժամանակ քափոր Բալոն էլ էկավ, ասին՝ էսիկ ա:  
 —Քափո՛ր Բալո, դո՞ւ ես էս էրեխեքի քափորը:  
 —Ես եմ, ախպեր ջա՛ն:  
 —Անունները դո՞ւ ես դրե:  
 —Ես եմ դրե:  
 —Ինչո՞ւ Վրեժ ու Դատաստան:  
 —Հայրն ա ասե:  
 —Ե՞րբ ասավ:  
 —Որ գնացիք աշխատանքի:  
 —Ինչի՞ց դրժված ասավ, ինքը կըղներ, էլի:  
 Քափորի լեզուն կապ ընկավ:  
 —Քափո՛ր, դու ասում իր, որ Հիրանը չե՞ս տեսել:  
 Քափորը լուռ էր:  
 —Ոոսի՛, խոսի՛, քափո՛ր, մի՛ լռի:  
 —Ասավ, որ Վրեժ դնենք, որ պապի վրեժը լուծի թուրքերից,  
 թուրքերը Հիրա պապին սպանեն են:  
 —Դու՛ քափոր, ես՝ թաքավոր, —ասավ ու կուրծքը բացեց, որ  
 նշանները տեսնեն:  
 Բոլորը զարմացած ու քարացած կայնան:  
 Թաքավորն ասավ. —Քափո՛ր, դե Հիմի մանրամասն պատմի՛՛  
 ոնց ա հելե: Կծիկը բացվում ա, բացողը դու ես: Գլուխտ կտրել կը-  
 տամ, որ մե բան թաքցրեր ես: Առանց տանջելու ամեն բան ասա՛,  
 մեկ ա տանջելուց ետո կասես:  
 —Դե ինչ ասեմ, թաքավոր՝, էթալուց հետո Հիրանը չեմ տեսե:  
 —Սանահերտ տեսել ա, որ մեռնում ա, էտ բանը քեզի ասել ա,  
 ուրեմն կամ դու ես սպանե, կամ սպանելուն ներկա ես հելել, դե  
 ճիշտն ասա:  
 —Ուրար չեմ, թաքավոր:  
 —Ջալլա՛թ, պատրաստվի՛ր գործիդ:  
 Կայնած օտարականներից մեկը չուխի տակից խանեց ոսկու  
 նման փայլուն բալթեն:  
 —Գլուխը կտրե՞մ, թաքավոր՝, —ասավ ջալլաթը:  
 —Քափո՛ր, պատմո՞ւմ ես, թե՞ չէ:  
 Որ կացինը տեսավ գլխի վերևում, քափորը ձենը քցեց փորը,  
 բոլորը մանդրամաս պատմեց: Թաքավորի թիկնապահները քափո-  
 րի խետ գացին, ոսկին բերին:  
 Թաքավորը սանամորն ասավ. —Ոսկին քո մոտը մնա, ավա-  
 գակները կըհարցակվեն, բոլորիտ կըսպանեն, ոսկին կըտանեն:  
 Ոսկին թող մնա բանգում, քիչ-քիչ կըբերես տոկոսները կըծախսես,  
 տղերքը որ մեծանան, թող դնեն առևտրի մեջ, ես իրավունք կըտամ  
 առըտուր անեն:

Ետո թիկնապահներին կարքադրեց քափոր Բալոյին տանեն էն բաղը, ուր թաղած ա Ալոն, խանեն, բերեն էստեղ թաղեն, իսկ քափորի հարցը կըլուծա մեջլիսը:

Թաքափորի հրամանը կատարեցին: Թաքափորը մե քանի օր ետո մեջլիս հափկեց և հարցը դրեց, որ մեջլիսը քննա, Դատաստանի խոր դատը մեջլիսը կատարա: Բալոյին բերին մեջլիսի նիստին:

Նորից Բալոն մանդրամասը պատմեց ոնց որ հելել էր: Բոլոր մեխկը հիրա վրեն վերցուց ու աղաչեց, որ խղճան հիրա էրեխեքին, չըսպանեն:

Մեջլիսում խոսողներից մեկն հառաչարկեց, որ կապեն ձիան պոչից, ձին բաց թողեն, թո տանա, զարկա սարին, քարին, սպանա:

Մեկ հուրիչն էլ հառաչարկեց հենց հիմի կտրել, մասերի բաժանել, քցել շներին: Մեջլիսի նիստին ներկա էր ջալլաթը: Հելավ կայնավ, մե խոսկ էլ ջալլաթը խնդրեց: Տվին:

— Էս մե ամիս ա, մարթ չեմ սպանե, ձեռներս քոր են գալում, տվե՛ք սպանեմ, էլի քցե՛ք շներին:

Վերչը մեկն հառաչարկեց, որ կախեն ու մե շափաթ կախուկ մնա, էթող-գալողը տենա:

Մեջլիսը որոշեց Բալոյին կախել ու կախելու գործողութունը անցնել ջալլաթին: Բերին դարաղաջ շինին, ճոպանը սապնին ու քցին Բալոյի վիզը: Ջալլաթը ոտով տվեց, Բալոյի ոտի տակի աթոռը թռավ, Բալոն կախուկ տեղը գնաց, էկավ:

Էսենց ա, վատ մարթը վատ մահով էլ կըմահանա:

Չարը՝ Բալոյի մոտ, բարին՝ մեր մոտ:

Երգնքից հընգավ իրեք կարմիր վոթվոթան խնձոր, մեկը՝ ասողին, էրկուսը՝ լսողներին: